

ՔԱՆԴԱԿ ԵՎ ԱՐՁԱՆ ԲԱՌԵՐԻ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՎՅԱՆՆԵՍ ՉԱՔԱՐՅԱՆ

Հայերեն **քանդակ** և **արձան** հոմանիշ բառերի ստուգաբանության փորձերը մինչ այժմ առավելապես հիմնված են եղել համեմատվող ձևերի միջև հնչյունական համապատասխանությունների վրա: Դա թույլ է տվել ստուգաբանել միայն **քանդակ** բառը՝ համարելով պահլավական փոխառություն: Հոդվածում առաջարկվում է երկու բառերի նորովի ստուգաբանություն՝ հիմնված ոչ միայն հնչյունական համապատասխանությունների, այլև բովանդակային վերլուծության և իմաստային հանրույթների բացահայտման վրա: Արդյունքում երկու բառն էլ բխեցվում են հնդեվրոպական նախալեզվի հայտնի արմատներից:

Քանդակ բառը ամենամակերեսային դիտարկմամբ կարծես թե կապվում է **քանդել** «փորել» բառի հետ: Չէ՞ որ բարձրաքանդակները, հարթաքանդակները, խորաքանդակները իրականացվում են հարթ մակերեսի փորագրմամբ: Քարե և փայտե բոլորաքանդակները (կոթողները, արձանները, կիսանդրիները) նույնպես իրականացվում են անմշակ բնակտորի՝ փորելով, քանդելով, տաշելով, ծակելով, կտրելով, հղկելով մշակմամբ: Հետևաբար կարելի է պնդել, որ թե՛ գրաբարի, թե՛ արդի հայերենի համաժամանակյա կտրվածքում **քանդակ** բառը, ըստ ներքին վերականգնման եղանակի, կազմված է **քանդ+ակ** բառակազմական բանաձևով՝ «քանդելով՝ փորելով կերտված» բնիմաստով:

Այլ լեզուների՝ **քանդակ** բառի համարժեքների վերլուծությունը բացահայտում է, որ նշված իմաստային բանաձևը («փորելով, տաշելով, կտրելով կերտված») հանրույթային է: Ստուգված ավելի քան յոթանասուն լեզուների մի մասն օգտագործում է լատիներեն sculpture-ի որևէ տարբերակ: Մյուս լեզուներում (այդ թվում՝ լատիներենը), որոնք ունեն ինքնուրույն կազմություն, մեծ մասամբ առկա է իմաստային նշված բանաձևը¹, որն արտացոլում է քանդակի ստեղծման արտադրաբանությունը (տեխնոլոգիան): Իմաստային այլ բանաձև է առկա, օրինակ, թուրքերենում, որտեղ քանդակը իմաստով նույնանուն է պատկերին (heykel «պատկեր, նկար, արձան»): Այս դեպքում բառն արտացոլում է միայն պատրաստի արդյունքը՝ առանց նկատի ունենալու ստեղծման ընթացքն ու ձևը: Դա նշանակում է, որ թուրքերը քանդակագործությամբ չեն զբաղվել, այլ միայն տեսել են

¹ Լեհերեն rzeźba (rzeźbić «փորագրություն»), չեխերեն և սլովակերեն socha (սլովակ. sochárčiť՝ «կտրել, բաժանել, փորագրել»), ֆիններեն veistos (veistää «կտրել, փորել, տաշել»), ինդոնեզերեն և մալայերեն patung (pahatan «փորագրություն»), սուահիլի uchonggji (mchoro «փորագրություն, արձանագրություն»), վիետնամերեն tác phâm diêu khâc (khâc «փորագրություն»), հունգարերեն szobor (szobor «փորագրել, կտրել»), սեբուանո pagkukulit (բառացի՝ «փորագրություն»), ճապոներեն horimono (hour «փորագրել») և այլն: Ինքնուրույն կազմություններ են նաև՝ վալիերեն cerflun, իռլանդերեն dealb, հունարեն γλυπτική, ջավայերեն reca, հինոգ khoom puab և այլն:

ուրիշների աշխատանքի արդյունքը, որն իրոք ընդամենը տարածաչափական պատկեր է²:

Այսպիսով, հայերենի համար ենթադրվող **քանդ+ակ** բանաձևը ոչ թե պատահական է կամ առերևույթ, այլ խորքային է, օրինաչափ և հանրույթային: Հայտնի է նաև, որ հայերը քանդակագործությամբ զբաղվել են անհիշելի ժամանակներից³, և անհավանական է, որ դրա վերաբերյալ չունենային իրենց սեփական, ինքնուրույն անվանումները: Հայերեն առաջին իսկ գրավոր աղբյուրներում առկա է **քանդակ** բառը:

Հակառակ այս պարզ տրամաբանության, հայերենի բառակազմական օրենքների ու լեզվամտածողության՝ մինչ այժմ եղած գիտական աղբյուրները փորձում են **քանդակ**-ը ներկայացնել իբրև պարզ բառ՝ քողարկելով նրա բնիմաստը: Հ. Աճառյանը, ճիշտ է, նշում է **քանդակ**-ի կապը **քանդ** արմատի հետ, բայց ոչ թե հայերենում, այլ պահլավերենում, որից էլ փոխառյալ է համարում երկուսն էլ՝ առանձին-առանձին⁴: Ընդ որում՝ **քանդել**-ի համար իբրև աղբյուր նշում է իրանական kandan բայը, որի արմատն է kan⁵:

Գ. Ջահուկյանը «Հին հայերենի վերջածանցների ծագումը» աշխատության մեջ **քանդակ** բառը տվել է **-ակ** ածանցով իրանական պատրաստի փոխառությունների շարքում (*ախորժակ, բուժակ, դիմակ, կամակ, նուիրակ, վրիպակ, քանդակ*)⁶: Մինչդեռ «Հայերեն ստուգաբանական բառարանում» **քանդակ** բառը բխեցնում է իրանական kandan բայից, իսկ **քանդ** արմատի համար հղում է տալիս **քանդակ** բառահոդվածին⁷: Եվ քանի որ **քանդակ**-ի համար համապատասխան պահլավական ձև (*kandak) չի վերականգնում, ստացվում է, որ **քանդակ**-ը հայերենում ոչ թե պատրաստի փոխառություն է, այլ **քանդ** արմատից **-ակ** ածանցով ինքնուրույն կազմություն: Այլապես անբացատրելի է մնում kandan > **քանդակ** անցումը:

Ս. Գալստյանը «Հայերեն դպրոցական բառակազմական բառարանում» (Եր., 2011) **քանդ**-ը և **քանդակ**-ը ներկայացնում է իբրև իրարից անկախ պարզ բառեր՝ լիովին խզելով դրանց իմաստային, տրամաբանական ու ծագումնաբանական կապը:

Ինչ վերաբերում է Հ. Աճառյանի՝ իրանական աղբյուրի վկայակոչմանը, ապա դա համոզիչ չէ: Նախ՝ հայերը, ինչպես տեսանք, քանդակագործությամբ զբաղվելիս են եղել շատ ավելի վաղ ժամանակներում, քան պահլավերենը (միջին պարսկերենը) սկսել է ազդել հայերենի վրա (սկսած մ. թ. ա. 3-րդ դ. կեսերից): Երկրորդ՝ ո՛չ հին, ո՛չ միջին, ո՛չ նոր պարսկերենում չկա kand- արմատից կազմված kandak բառ՝ «արձան, արվեստի

² Այդպես է նաև մի քանի այլ լեզուներում, օրինակ՝ աֆրիկաանս beeldhou (beeld «պատկեր, նկար») և այլն:

³ Հայաստանի տարածքում քարի մշակումը վկայված է հին քարի դարից: Մեզ հասած հնագույն հարթաքանդակները՝ ժայռապատկերները, հայտնի են նոր քարի դարից: Բրոնզի դարից մեզ են հասել բուրդաքանդակներ՝ վիշապաքարեր, բրոնզե, փայտե, կավե, քարե արձանիկներ և այլն (տես «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 4, Եր., 2004, էջ 868-869):

⁴ Տես Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, էջ 551-552:

⁵ Տես պարսկերենում «փորագրիչ» իմաստով կա kandekar բառը, որ կարող է նշանակել նաև «քանդակագործ»:

⁶ Տես «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» (ժողովածու), Եր., 1998, էջ 8:

⁷ Տես Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 776:

գործ» իմաստով, որից իբր պիտի փոխառված լիներ հայերեն **քանդակ**-ը: Ներկայումս «քանդակ, արձան» նշանակությամբ պարսկերենում գործածվում է արաբերենից փոխառյալ *mojasame* բառը: Իրանական լեզուներում *kandak* բառ կա՝ «խրամ, փոս» իմաստով (որից էլ արաբերենի միջոցով փոխառյալ է համարվում **խանդակ** բառը): Իսկ «փորագրություն, քանդակ» իմաստով իրանական (պահլավական) **kandak* բառն ընդամենը ենթադրություն է՝ հայերենի հիման վրա վերականգնված ձև: Բայց խելամի՞տ է արդյոք հայերեն բառի իրանական ծագումն ապացուցելու համար հին կամ միջին պարսկերեն բառեր «վերականգնել»-հորինելը: Մանավանդ այն դեպքում, երբ ավելի մեծ հաջողությամբ ապացուցելի է հայերեն բառի հնդեվրոպական ծագումը:

Եվ իսկապես, շատ ավելի տրամաբանական է հայերեն **քանդ**-ը բխեցնել հնդեվրոպական նախալեզվից, քան կապել իրանական ինչ-որ ենթադրյալ բառաձևերի հետ՝ առանց փոխառությունը վկայող փաստական ապացույցների, ելնելով հնդեվրոպական նույն ծագման հայերեն և իրանական բառերի միայն արտաքին նմանությունից, որը միանգամայն բնական է՝ նկատի ունենալով հայերենի ու իրանական լեզուների մերձավոր ցեղակցությունը: Բայց այդ նմանությունը գոնե այս դեպքում այնպիսին չէ, որ ենթադրի միակողմանի պարտադիր ուղղակի կապ⁸: Չկա նաև այնպիսի սահմանափակող հանգամանք կամ պայման, որը բացառի հայերեն բառի հնդեվրոպական անմիջական ծագման վարկածը:

Լատիներեն *sculpture*-ի համար վերականգնվում է հնիս. *(s)keu-/skel- «կտրել, ճեղքել, բաժանել» նախաձևը, որի պարզական արմատն է *sek-ը: Դրանից երբեմն s նախաձայնի անկումով, զանազան աճականներով ու վերջածանցներով և ձայնդարձի տարբեր աստիճաններով առաջացել են արմատական բազմաթիվ այլ տարբերակներ, որոնք հնդեվրոպական լեզուներում բավական մեծ տարածում ունեն: Հայերենում, ըստ Յ. Աճառյանի, այդ բառերից են՝ **քաղել** [<*(s)k-], **քերել** [<*(s)ker-], **քերթել** [<*(s)ker-p-], **քերծել** [<*(s)ker-δ], **քորել** [<*(s)kor-], **քարթ** «արքայիկ օձ» [<*(s)kɛr-p-], **ցել** «ճեղք, պատռվածք» [<*skel-], **ցել** [<*sk'el-], **ցիտ** «մարմինը բզկտված՝ պատառոտված» [<*sk(h)id-], կասկածով՝ նաև **ցաքի** [<*sk'ə-ki-], **ցախ** [<*k'a(n)k- <*sk'ə-kho-] և այլն⁹, ըստ Գ. Ջահուկյանի՝ նաև **կեղև** [*keleb- կամ *kel-ep-], **շիւ**, **շիւղ** [*skhi-p-], **ցուպ** [*skōbo-/skēb(h)/p-], կասկածով՝ նաև **կոտոր/կտոր/կտրել**, **կտուր**, **կտիր**, **կուրտ/կրտել** [**(s)keu-t-], **խտտել** [<*sk(h)ed-]¹⁰, **խտոր** [<*sk(h)odoro-], **քուրջ** [*kōrtio-], **շոպկել** «նաշկել,

⁸ Իր կարծիքը ամրապնդելու համար Յ. Աճառյանը հիշում է նույն *kan-* արմատով կազմված **նկան** (< ni+kan) և **վկանդել** (< vi+kan-d) փոխառությունները, որոնք «Քանդակ» բառահոդվածում ներկայացնում է իբրև հին իրանական (զենդերենից՝ *ni-kan* «թաղելով թաքցնել» և *vi-kanti* «փոսով անջատել, քանդել, փուլ ածել»), իսկ «նկան» և «վկանդել» բառահոդվածներում՝ միջին իրանական (պահլավերենից՝ **nikan* «*մոխրի տակ թաղելով եփված հաց», և **vi-kand* «խորտակել»): Բայց նկատենք, որ պահլավական ենթադրյալ իմաստներով ենթադրյալ ձևերից փոխառյալ համարվող *նկան* և *վկանդել* բառերում արմատի սկզբնահնչյունը ոչ թե **ք** է, այլ **կ**: Գ. Ջահուկյանը սրանց է միացնում նաև *սպական* բառը (իբրև միջին իրանական *apa-kan* «փչացնել») (տես Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 66, 712):

⁹ Տես Յ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, համապատասխան բառահոդվածները:

¹⁰ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 398, 588-589, 744-745, 422, 343:

պլոկել, փրցնել» [*skhōb-], **ցլեպ** [<*sk(ē)leb-], **ցաքառ** [<*sk'ak-]¹¹, ըստ Է. Աղայանի՝ նաև **խեղբ/խիղբ** «ծիլ, ընծյուղ» [<*qelp-/*khelp-], **խեղեփ** «կես, զույգ հյուսքից մեկը» [<*qeleph-], **չեղբ** [<*qel(e)p-], **ճեղ(ք)**, **ճիղ**, **ճղել**, **ճիղ**, **ճուղն**, **ճող(ք)** [*sqel-/*sqol-], **չերտ** [<*sqerd-], **քուք** «զավազան» [*qōp-]¹²: Իմաստից և ձևից ելնելով՝ այս շարքին կարելի է ավելացնել նաև **ճաք**, **ճակ**, **ճախ**, **ճիւ**, **ճվտել**, **ճողել**, **ժեղ**, **կարճ**, **կրտսեր** և այլ բառեր, որոնք Գ. Աճառյանը համարում է չստուգաբանված:

Ինչ վերաբերում է **քանդ** արմատին, ապա, ինչպես տեսնում ենք, նրա բուն արմատական **քա-** հատվածը կա **քաղել** և **քարք** բառերում: Տարբերությունը վերաբերում է ածականներին ու ածանցներին: **Քանդ**-ի դեպքում արմատը ռնգայնացած է և *d(h)-ով ածած {ինչպես և **խանդ** [<*khnd-], **խինդ** [<*khendh-], **գինդ** [<*vendhā-], **լինդ** [<*lendh-], **պինդ** [<*bhendh-], **դունդ** [<*dhundh-], **թունդ** [<*stund-] արմատների դեպքում}: Դետևաբար միանգամայն տրամաբանական է **քանդ** < *(s)knd(h)- բանաձևը, որով հայերեն **քանդակ**, լատիներեն sculpture (զուցե նաև չեխերեն և սլովակերեն socha, վալիերեն cerflun) բառերը ներկայանում են ցեղակից ձևեր՝ հնդեվրոպական միևնույն նախածնի իրավահավասար ժառանգներ¹³:

Այսպիսով, ըստ մեր վարկածի, **քանդակ** բառը կազմված է **քանդ** արմատից և **-ակ** ածանցից: Արմատի նախածնն է *(s)knd(h)-, որտեղ բուն արմատն է *(s)k-, որ պարզական *sek-ի սղված տարբերակն է: Արմատի այդ տարբերակը ստացել է *d(h) ածական և ենթարկվել ռնգայնացման (դ): Արմատը ներկայացնում է ձայնդարձի ստորին աստիճանը, որում վանկարար է ռնգային ձայնորդ դ-ն: Դնիլ. *(s)knd(h)-ը հայերենում կորցրել է s սկզբնահնչյունը և ածականի հազագային **h** բաղադրիչը (չնչեղությունը)՝ ըստ բաղաձայնների հայկական տեղաշարժի¹⁴, ձեռք է բերել **ա** վանկարար ձայնավորը, իսկ ռնգային դ-ն դադարել է վանկարար լինելուց: Արդյունքում ունենք **քանդ** արմատը, որը ստացվել է հետևյալ անցումներով՝ *(s)knd(h)- > *knd(h)- > *knd- > *kand- > **քանդ**:

¹¹ Գ. Զահուկյան, Գայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան, Եր., 1987, էջ 148, 130:

¹² Է. Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 77-78, 126-127, 113-115, 128-129, 154-155:

¹³ Դնիլ. *sek- պարզական արմատի ու դրա ածած տարբերակների այլ զարգացումներից՝ հմնտ. scalpere «ճեղքել, հերձել, կտրել», scribere «գրել», script, հուն. grapho «գիր», սանս. rikh- «գրել, փորագրել, նկարել, ճանկռել», հայ. քերել, քերակա- նություն, հուն. skorprios «կարիճ», krōpion «մանգաղ», skallō «փորել», միռլ. cerb «հատուկ, սուր», scalp «ճեղք», լեթթ. skripsiis «գդալի մեջը փորելու կեռ դանակ», սանս. kṛpāṇa «թուր», kṛpāṇī «մկրատ, դաշույն», գերմ. scharf «սուր», ռուս. щель «ճեղք», կորա «կեղև», колоть «ճեղքել, կտրել, կտրել, ծակել», рас-кол «ճեղքում, բաժանում», լատ. cortex «կեղև», զնդ. karāta, պրս. kard «դանակ», անգլ. sharp «սուր, հատուկ», share «հատել, մաս, բաժին», shilling «մանրադրամ», half «կես, մաս», հին անգլ. sceran, scieran, նախազերմ. *sker- «կտրել», *skarpaz «հատում», հնորվ. հֆրիգ. skera, դան. scheren, գերմ. scheren «կտրել, խուզել», սանսկ. krntati «վնասում է, վիրավորում է, սպանում է», krntati «կտրում է», հեթիթ. karsh- «կտրել, պոկել», հուն. keirein «կտրել, խուզել», լիտվ. skiriu «զատել», հիռլ. scaraim «զատում են», վալի. ysgar «զատել», ysgyr «հատված», հին անգլ. scearp «կտրուկ, սուր, հատուկ», հաբս. scarp, հնորվ. skarpr, հֆրիգ. skerpr, դան. scherp, գերմ. scharf «սուր, հատուկ», լատիշ. skarbs «հատուկ», միռլ. cerb «հատում» և այլն: Տե՛ս նաև Գ. Աճառյանի, Գ. Զահուկյանի, Է. Աղայանի աշխատությունների վերը հղված հատվածները, Պոկոռնու և այլ ստուգաբանական բառարաններ, <http://www.etymonline.com> կայքը:

¹⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, Գայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան, էջ 227:

Սրանից էլ հետագայում **-ակ** վերջածանցով կազմվել է **քանդ-ակ** բառը:

Հայերենն ունի նաև **արծան** բառը, որը հոմանիշ է **քանդակ**-ին: Այդ բառը համարվում է չստուգաբանված: Բայց եթե նրա նկատմամբ կիրառենք իմաստաբանական վերոհիշյալ բանաձևը, ապա կարող ենք ենթադրել, որ **արծան** բառը ածանցավոր է՝ **արծ+ան**: Եթե **արծ-** արմատի մեջ փնտրենք «կտրել, փորել, ծակել» և նման իմաստներ, ապա կնկատենք, որ նրան թե՛ ձևով, թե՛ իմաստով մոտ են **հերծ, հերկ** (<*perg-<*perk- «պատռել, ճեղքել, ճանկռել, փորփրել»), **հեր-իւն** (<*per- «ծակել») արմատները: **Հերծ**-ը Աճառյանը չի ստուգաբանում, բայց հիշում է Պետերսոնի <*per-gʰ- «հերծել, քանդել, պատռել» վերականգնումը: Վերջինս կասկածով նշում է Գ. Ջահուկյանը՝ նկատելով, որ «այս ձևը, բացի հայերենից, այլ զուգահեռներ չունի»¹⁵: Սրանցից ելնելով՝ կարելի է առաջարկել **արծ-ան** < *(p)ɾ-gʰ- «ճեղքել, հղկել, փորել, ծակել» ստուգաբանությունը¹⁶: Այստեղ բուն արմատն է *(p)ɾ-, որը պարզական *per-ի սղված տարբերակն է: Այն ստացել է gʰ ածականը: Արմատը ներկայացնում է ձայնդարձի ստորին աստիճանը, որում վանկարար է ձայնորդ ɾ-ն: Հնիւլ. *(p)ɾgʰ-ը հայերենում կորցրել է p սկզբնահնչյունը, ձեռք է բերել **ա** վանկարար ձայնավորը, իսկ ɾ-ն դադարել է վանկարար լինելուց: Քմայնացած gʰ-ն օրինաչափորեն դարձել է **ծ**¹⁷: **Արծան** բառը հետևաբար ստացվել է հետևյալ անցումներով՝ *(p)ɾ-gʰ- > *ɾgʰ- > *argʰ- > **արծ-** > **արծ-ան**¹⁸:

Այս ստուգաբանության հիման վրա բացահայտվում է նաև **արծանագրել** բառի բնիմաստը՝ «փորագրել, քարի վրա փորելով գրել»:

Այսպիսով, հողվածում առաջարկվում է **քանդ-ակ** ածանցավոր կազմությունը համարել ոչ թե փոխառություն միջին պարսկերենից, այլ հնդեվրոպական *(s)keu-/*(s)kɛd(h)-/*skel- «կտրել, ճեղքել, բաժանել» նախաձևի ժառանգ, ինչպես լատ. sculpture «քանդակ» բառը: Դրա իմաստաբանական հիմնավորումն այն է, որ լեզուների մեծ մասում «քանդակ» նշանակող բառերը նույն արմատից են, ինչ «քանդել, փորել, տաշել, հղկել, կտրել, ծակել» նշանակող բայերը, այսինքն՝ ունեն «քանդելով փորելով կերտված» բնիմաստը, որը փաստորեն իմաստաբանական հանրույթ է և արտացոլում է քանդակի ստեղծման արտադրաբանությունը:

Նույն սկզբունքով առաջարկվում է մինչ այժմ չստուգաբանված **ար-**

¹⁵ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 458-459:

¹⁶ Արմատի *p>h սկզբնահնչյունի անկման համար՝ հմմտ. **արթ**-<*(p)ɾth- «ելնել, վեր կենալ, ցատկել» (Յ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 314), իսկ առանց p-ի անկման՝ *(s)ɾɪ-th- > **հարթ**-նուլ (նույն տեղում, հ. 3, Եր., 1973, էջ 58-59): Հ սկզբնահնչյունի անկման օրինակ է նաև **հատ** > **ատ** անցումը (նույն տեղում, հ. 3, էջ 51): Ի դեպ, *per- արմատի սկզբնահնչյունի անկումը բնորոշ է ոչ միայն հայերենին (տես վերջին ծանոթությունը):

¹⁷ Տես Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան, էջ 227:

¹⁸ Հնիւլ. *per- «ծակել» պարզական արմատի ու դրա ածած տարբերակների այլ զարգացումներից՝ հմմտ. սանսկ. parśāna- «ճեղք», հուն. peiro «ծակել», perone «ծակիչ, գնդասեղ», peroun «պատառաքաղ», հսլ. na-periti «ծակել», ալբան. š-puay «պատը քանդել», լատ. porca «ակոս, հերկ», կիմր. rhy'ch «ակոս», գալլ. rica «ակոս», ֆրիզ. rale «շերտ», լիտ. peršeti «ծակող ցավ», հրեետ. rec «հերկել», բրետ. rech «ցավ», գերմ. Furche «ակոս», անգլ. furrow «ակոս», հիսլ. for «ջրանցք», հիռլ. et-rech «ակոս» և այլն (տես նաև Յ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի բառարանների վերը հղված հատվածները, Պոկոռնու և այլ ստուգաբանական բառարաններ):

ծան բառի համար հնչիւլ. *pɾ-g'h- «ճեղքել, հղկել, փորել, ծակել» > **արծ-ան** ստուգաբանութիւնը:

Բանալի բառեր – *հայոց լեզու, ստուգաբանութիւն, հնդեվրոպական նախալեզու, քանդակ, արծան*

ОВАНЕС ЗАКАРЯН – Этимология слов Բանդակ и Արծան. – Армянское слово **քանդակ** "статуя, скульптура" принято считать заимствованием из среднеперсидского языка. Синонимичное слово **արծան** "статуя" считается не этимологизированным.

В статье предлагается версия, согласно которой суффиксальное образование **քանդ-ակ**, как и латинское слово *sculpture* "скульптура", произошло от праиндоевропейского корня *(s)keu-/*(s)knd(h)-/*skel- "резать, расщеплять, разделять". Семантически эту этимологию обосновывает следующее. В большинстве языков слова, обозначающие статую, скульптуру, восходят к корням со значением "копать, рыть, тесать, колоть, долбить", т. е. имеют этимон "созданный вырыванием, гравированием" – семантическую универсалию, отражающую технологию создания статуи.

По такому же принципу этимология слова **արծան** предлагается от праиндоевропейского корня *(p)ɾ-g'h- "расщеплять, тесать, шлифовать, колоть".

Ключевые слова: *армянский язык, этимология, праиндоевропейский язык, скульптура, статуя*

HOVHANNES ZAKARYAN – The Etymology of the Words Բանդակ and Արծան. – The Armenian word քանդակ "statue, sculpture" is considered to be a borrowing from Middle Persian language. Synonymous word արծան "statue" is not considered to be etymologized.

The article argues that the suffixed formation քանդ-ակ is inherited from PIE root *(s)keu-/*(s)knd(h)-/*skel- "cut, cleave, split", as well as the Latin word *sculpture* "statue". This etymology is semantically grounded by the fact that in the majority of languages the words for "statue, sculpture" are derived from the same root word as "ruin, dig, whittle, polish, cut, pierce", i.e. have etymon "created by wresting, engraving", which is the semantic universal and showcases the statue creation technology.

By the same principle, the article suggests the etymology of suffixed formation արծ-ան from PIE. root *(p)ɾ-g'h- "cleave, hew, cut, chop".

Key words – *the Armenian language, etymology, Proto-Indo-European, sculpture, statue*